2004

1104-164
252

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՔԻՆ

ԸՆԴԴԷՄ ՆՈՐԱՂԱՆԴԻՑ

ՏՊԱՐԱՆԻ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

=1846=

ԳԻՆ 40 ֆ՝ՐՈՅ։

691

Z-28
Printed in Turkey

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ,

ԱՌԱՋԻՆ

ԸՆԴԴԻՄ ՆՈՐԱՊԱՆԴԻՑ

ՏՊԵԱԼ,

ՀՐԱՄԱՆԱՒ Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

=1846=

281.6:286

Յունվար 31. 1846. Պարիսպարանը Եպիսկոպոսաց և վարդապետաց ժողով ըլլալով ներկայ յայսպարարութեան յեռագիր օրինակը կարդացվեցաւ եւ ժողովոյն գոհութիւն ընծայեցաւ։

«Զ գրուածն որ ընդդէմ զարարութեանն մոլորելոցն եթէ հալածիմք, և վասն խաբէական և մոլորամիտ գոլոյ դաւանութեան հրատարակելոյ 'ի նոցանէ մոլարաղանդիցն՝ արժանի համարիմք տպագրութեամբ 'ի լոյս ընծայելոյ։

Printed in Turkey

Հայոց ազգէն քանի մը անձինք՝ զիրենք հալա-
ծող մը չեղած՝ հալածեալ քրիստոնեայք ստորագ-
րութիւնով մեռելոց մէկ գիր մը հրատարակեցին.
որուն օրինակը այս է։

Վերհասիտաս Տէր

„Այս օրերս մեզի պատահած հա-
„լածմունքը՝ զրկողութիւնը՝ զրպար-
„տութիւնները և կրած փնտռտանքնիս
„կը պարտաւորեն զմեզ ձեր Տէրութեանը
„բողոքել. քանզի մենք որքի պիտի ե-
„թանք, եթէ ոչ մեր սիրելի Ազգին.
„որ իբրեւ թշնամի կարծելով իրեն՝ կը
„մերժէ մեզ եկեղեցիէն. և իր անդամ-
„ները ըլլալու արտօնութիւններուն
„կը զրկէ. և որովհետեւ մենք հիմայ
„Ազգին մէջ իբրեւ անհաւատ կամ հե-
„ռեռիկոս կամքատամուտ ենք և որ ի-
„բաւունք կը սեպէք նզովել մեզ ու
„բանադրել, մենք ալ պարտաւորվել-
„լանք մեր ճշմարիտ հաւատացեալներ
„և ճշմարտապէս Քրիստոսի եկեղեցի-
„ին անդամները ըլլալնիս խոստովանիլ՝
„քրիստոնէական ուղղափառ դաւա-
„նութիւններս ցուցնելով։

„Մենք կը հաւատանք և կը խոս-
„տովանիմք Ամենասուրբ Երրորդու-
„թեան և միոյ Աստուածութեան Հօր
„և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. մի Տէ-
„րութիւն՝ մի Կամք մի Իշխանութիւն։

„Կը հաւատանք մեր Տէր Յիսուս
Քրիստոսին՝ որ է կատարեալ Աստ-
„ուած՝ և կատարեալ Մարդ. ու կը
„դաւանիմք զանիկայ մի միայն Փրկիչ
„աշխարհի և ճշմարիտ Քահանայա-
„պետ և Միջնորդ ու Բարեխօս հա-
„ւատացելոց. և զլուխ իր Եկեղեցիին։
„Որ և ինքը պիտի գայ դատելու կեն-
„դանիները և մեռելները. և արդա-
„րութեամբ հատուցանելու արդա-
„րոց կեանք յաւիտենական և մեղա-
„ւորաց տանջանք յաւիտենական։

„Կը հաւատանք Հոգւոյն սրբոյ՝
„որ է Ընդ և կատարեալ Աստուած.
„և աղքիւր ճշմարտութեան, որ խօ-
„սեցաւ օրէնքներով ու Մարգարէնե-
„րով և Աւետարանով. որ և ինքն է
„առաջնորդ և մխիթարիչ քրիստոնէից։

„Կը հաւատանք Աստուածաշունչ
„Սուրբ գրոց հին և նոր կտակարա-
„նաց, որ է կատարեալ կանոն Եկե-
„ղեցւոյ. և անոր մէջ պարունակուած

„բոլոր վարդապետութիւնները և կա-
„նոնները և խորհուրդները բոլորով
„պարիս կընդունիմք . և անկէ որ-
„ված պարտաւորութիւնները ամե-
„նայն հաւատարմութեամբ կատա-
„րելու միշտ կը ջանամք . որ մաքուր
„խղճմտանք ունենամք Աստուծոյ առ-
„ջեւը ու մարդոյ առջեւը , Պօղոս Ա-
„ռաքեալին ասուածը զրուցածին պէս ։
(Գործ . Իդ . 16) ։

„Մենք կը դաւանիմք թէ ինքը-
„զինքնուս համար և թէ բոլոր ճշմա-
„րիտ քրիստոնեայներուն համար , որ
„պարտաւոր եմք մկրտուիլ յանուն
„Ամենասուրբ Երրորդութեան ։

„Ինչպէս նաև պարտաւոր եմք ըս-
„տէպ հաղորդութիւն ընել Տէրոջը
„մահը յիշելու համար՝ Քրիստոսի
„սահմանադրութեանը պէս ։

„Եւ թէ որ աւելի քննել կուզէք
„մեր հաւատքը , մենք կը խոստով-
„նիմք որ մեր հաւատքը մեր եկեղե-
„ցիին ընդունած սուրբ Աւետարանին
„ցուցրցած հաւատքն է . ինչպէս որ
„Նիկիական հանգանակն ալ Աւետա-
„բանին համաձայն ըլլալով՝ անիկայ
„ընդունելուիս ալ մեր հաւատքին

„ուղղափառութիւնը կը յայտնեմք քրիստոնէական ընդհանուր Եկեղեցիին գաւանութեանը համեմատ։

„Եւ արդ՝ մենք որ կը խոստովանիմք պարզապէս թէ մեր Հաւատքը Սուրբ Գրքին ստուգացած է, ինչպէս որ անանկ ըլլալ արժան է և իրաւ, ինչպէս կրնանք ընդունիլ ան պահանջմունքները, որ Սուրբ Գրոց կանոնին հակառակ է. և բացարձակապէս արգիլուած է նոցմէ։

„Եւ այսպէս Աստուածաշունչ Սրբ Գրքէն յայտնապէս չի վկայուած բաները չընդունելուին յամառութիւն և ապստամբութիւն սեպելով մեզի ազգին թշնամի և եկեղեցիին քակտիչ կանուանէք ալ նէ, մենք բնաւ առանկ միտք մը չունենալով և մեր Աստուծոյ այնչափ կը սիրեմք Պօղոս առաքեալին Հռովմայեցւոց գրածին պէս, (Հռովմ. Թ. 3.) որ հայրապետ անուանելը մեզի պարծանք կը սեպնք. և ամենեւին չենք ընդունիր ուրիշ անուն մը. թէ և հաստատակամ ըլլն մեզի Խուսէտաստանդ կը զրուցեն. բայց մենք կրկին կը խոստովանիմք, որ ազգաւ հայ եմք, հաւատով

„քրիստոնեայ, և Օսմանեան տէրու-
„թեան հնազանդ հպատակներ։ Եւ
„այսու ամենայնիւ՝ թէ որ մենք կրօ-
„նական կամ քաղաքական բաներու-
„մէջ մէկ սխալմունք մը ունինք, վասն
„զի բնաւ ինքզինքնիս անսխալ չենք
„վկայեր, յօժարութեամբ կընդու-
„նինք՝ թէ որ նոյն սխալմունքնիս ցու-
„ցընել հաճիք. և ապէկ դիտէք, որ
„մարդկայնն բնութեան համոզումը՝
„ճշմարտութեան վկայութիւնովը մի-
„նակ կըլլայ ու չէ թէ բռնութեամբ.
„և մենք Աստուծոյ վախովը չենք կրը-
„նար մեր խղճին դէմ բան մը ընել։

„Եւ արդ՝ կաղաչենք որ մեր աս յայ-
„տարարութեան նամակը ձեր Տէրու-
„թեանը առջեւը ընդունելի ըլլայ,
„և աս նեղութիւններէն մեզ ազա-
„տելու շնորհք և ողորմութիւն ը-
„նէք. և մնամք Վ. Հայրապետ Տէրու-
„թեանդ բարեմաղթ ծառայք.

Հայոց Եպիսկոպոսներայքս։

1846 Յունվար 22

Այս գրոցս երկու բան կը հասկը-
ցընեն. մէկ մը հաւատալի բաներու վրայ իրենց դաւանութիւնը. որով զի-
բենք ազգին իբրու ուղղափառ ցոյց-
նել կ'ուզեն. որպէս զի եկեղեցւոյ մէջ ընդունելին. ազգին պարզամիտներու հետ անխախտ սեպհականութիւն ընեն. և իրենց մոլար վարդապետութիւնը ա-
նոնց ալ խօսելով մոլորեցընեն. ինչպէս որ իրենք յիմարութեամբ ուրիշ խօս-
քի ականջ դնելով խաբվեր և մոլորեր են։

Դ. երկրորդ՝ զիրենք աշխարհական բռնութիւնով նեղված ցոյց, կ'ուզեն հալածեալ անուանը իրենց վրայ առա-
գելով՝ ազգին մէջէն պարզամիտ գրա-
վոնները իրենց ցաւակից առնան։

Այդ առնց գրած դաւանութիւնը նայելով՝ ասոնք ուղղափառ են չեմք կրնար ըսել. և որովհետև ուղղա-
փառ չըլլալնին լոկ հոգեւորական յան-
ցանք մը ն է, անոր համար ուղղակի ի-
րենց մոլորեալ ըլլալուն պատճառաւ մարմնաւոր և աշխարհական բռնու-
տակը ենթած չեն. որովհետև հոգե-
ւոր յանցանքի դէմ մարմնաւոր պա-
տիժ տալը յարմարութիւն չունի։ Ա-
ս-

ոչ իրենց խիղճն է միայն զկրենք հա-
լածողը. և ասոր համար իրենց անու-
նը հալածեալ դնելու ալ իրաւունք չու-
նին. հիմա մենք այս յայտարարու-թիւն
առնք պիտի հասկցընենք. ա. թէ ա-
սոնք իրենց գրած գաւանութիւնը նա-
յելով՝ ինչո՞ւ չեն կրնար ուղղափառ
լսվիլ. բ. թէ սուրբ եկեղեցւոյն ա-
սոնց ըրածին դէմ բրուած ճամբան
հալածումմ չէ։

Ը.

Ներազանդները՝ իրենց գրած գաւանութիւնը նա-
յելով, ուղղափառ չեն կրնար լսվիլ։

Քրիստոնէի մը բաւական է իրեն
հաւատքին ուղղափառութիւնը ճանչ-
ցընելու համար նիկիական հանգանա-
կը ընդունիլ ամբողջ, մէջէն բան մը
չպակսեցընելով. ինչպէս որ իւրաքանչ-
իւր քրիստոնեայ մկրտուած ժամանա-
կը կ՚ընդունի և կը խոստովանի, թէ որ
չափահաս է նէ՝ անմիջապէս իր բերա-
նովը. և թէ երախայ է, և խօսելու
բաւականութիւն չունի նէ, մէկ ու-
րիշի մը փոխանորդութիւն, որ է իւր
կնքահայրը։ Այս հանգանակս է՝ որ ա-

մէն օր քրիստոնէից եկեղեցեաց մէջ կը կարդացուի. և սոյն բուն սկիզբը առաքելական հանգանակն է՝ որ առաքեալները մէկ տեղ գալով շինեցին, և ամէն քարոզած եկեղեցիներուն առաջ դրին։

Ուրիշներն ալ՝ թէ որ պարզապէս իրենց ուղղափառութիւնը պիտի հաստատեն՝ հերիք էր այս հանգանակը կամ հաւատամքը գրելը. անկէց ետքը կը մնար քանի մը բան հարցնել իրենց, որ ընդհանուր եկեղեցին միապէս կ'ընդունի սկիզբէն մինչև հիմա. թէ որ իրենք այս բաներս ալ ընդունին՝ անշուշտ ուղղափառ կը սեպուին. և եկեղեցւոյ մէջ կ'ընդունուին. թէ որ սոնց մէկը չընդունին՝ հաւատոյ հանգանակը լման կ'ընդունին ասելին սուտ կ'ըլլայ. որովհետև չընդունելնուն տակէն ընդունողները սխալեր են կ'ելլայ. և ընդունողն ալ ընդհանրական և առաքելական եկեղեցին ըլլալով, "Հաւատամք 'ի մի միայն սուրբ կաթուղիկէ" և առաքելական եկեղեցի" խօսքը ընդունած չեն ըլլար. քանզի Եկեղեցին պիտէր է ասելը, և հաստատմամբ յեկեղեցի ասելը

մէկ տեղ չըլլար որովհետեւ մէկ բանին արխալին ալ գիտնալով, անոր հաւատալ չըլլար։

Բայց այս նորագանդներըս հաւատոց հանդանակը իրենց հաւատքը յայտնելու բաւական չի սեպելով, իրենք իրենց առանձին մէկ նոր հաւատամք մը շիներ են. որ եկեղեցւոյ ընդունած հաւատոց գաւանութիւններուն մէկուն ալ չի նմանիր. որովհետեւ մէջը կաւկածելի պակաս ալ կայ, և մոլորական յաւելուած ալ կայ. հիմայ ասոնք տեսնենք թէ ինչ են։

1 Անդանդներուն գաւանութիւնը մէջ կասկածելի պակաս։

Հաւատոց ուղղափառութիւն ճանչցընելու համար գրուած գաւանութիւնը պակաս չի կրնար ըլլալ մոռացմամբ. մանաւանդ երբոր քանի մը հոգիի խնդիր մէկ տեղ գալով գրուած ըլլայ, ինչպէս է այն վերոյգրեալ գաւանութիւնը. որուն ստորագրութիւնը հալածեալ քրիստոնեայք գրուած ըլլալէն, յայտնի է որ գրողները մէկ երկու հոգիէն եւ վեր չեն, և թէ որ իրենց աղանդակից-

ներսումն ամէնումն ալ հաւանութիւնը առին նէ, թեչափս կ'երեւի թէ առին, ամէնը մէկէն երեսումն և հինգ կամ քառասունն հոգի մը կ'ելլեն. ամէնքն ալ իրենց խելքին և գաղափարը վրայ այն սատիճան վառահ եղող մարդիկ, որ կ'ըսեն թէ՝ առանց գիրքը կարդացածնուս պէս մեր հաւատքը այնքան յստակ և պարզ կը հասկընամք, որ առաքեալներուն օրէն մինչեւ հիմա աշխարհքիս վրայ եկող, և աշխարհքիս ամէն կողմը հիմակվան ատենս գրուածվող քրիստոնեայ թէ եկեղեցւոյ անդամ ըլլայ և թէ չըլլայ, մեզի պէս աղէկ չի կրնար հասկընալ։ Նոր ասիկայ նորաղանդ եղողներուն ամէն մէկը կ'ըսէ, և կը հարկադրի ըսելու, որովհետեւ միայն առանց գիրքը կարդալով հաւատքը պիտի ստրմի. և հաւատալի բաներուս վրայ ուրիշ մարդուս բան պիտի չի կրնայ հարցընել. չէ նէ բանին մէջը մարդկային հաւատք կը մրնէ կ'ըսեն։

Միայն սա կայ որ՝ Էս Բոլոր Քրիստոնէայ-ներին աղէկ կը հասկընամ ըսելը՝ առանց թաղի ամբարտաւանութիւն մը ըլլալը իրենք ալ հասկընալով, այս ամբար-

տաւանութիւնը ծանկերու համար սա խօսքս գտեր են ըսելու թէ՝ սուրբ գիրքը Աստուածաշունչ սուրբ Հոգին ինչի անունի պարտական կ'ընէ. և որոմիներու մէկուն եղած պղտումը մէկալին չի յարմարիր առանց պատճառի մի և նոյն ոգի Հոգւոյն իրարմէ տարբեր և իրարու հակառակ պղտումներ կրնան. և ասոնք ամբարտաւանութեան վրայ ամբաստանութիւն ալ կ'ելլեցնայ։

Ասանկ մարդիկ՝ որ Հաւատալի բան գտնելու, շինելու, գտնելու, շինելիք ծառայ որոշելու վարպետ եմք կ'ըսեն, հաւատոց գաւանութիւն գրած առնենին, չէ թէ միայն գրածոյնին, այլ և չի գրածոյնին ալ բան հասկցընել կ'ուզեն. և որոմիներու իրենց գրոյն մէջը սա ալ ըսեր են թէ "Նիկիա" կան հանդանակին ալ աւետարանին "համձայն ըլլալով, անիկոց ընդունե" լուին ալ մեր հաւատքին ուղղափա" ռութիւնը կը յայտնեմք քրիստոնէական" եկեղեցիին գաւանութիւնը համեմատ" սա խօսքով կը խոստովանին, որ նոյն հան" գանակը ամէն կերպիւ աւետարանին համձայն ճանչցեր են. քանզի չեն ըսեր թէ, Նիկիականն հանդանակին խօս-

քերէն աւետարանին համաձայն եղած տեղերը կ'ընդունինք, այլ ասեր են որ «Նիկիական հանգանակին ալ աւետա- » բանին համաձայն ըլլալով » ևայլն. ա- նանկ է նէ նոյն հանգանակին մէջէն բան պակսեցուներլին, աւէպարանի համայն հաւատքէն բան պակսեցնել է. մէջը բան եւելցներլին աւէպարանի համայն հաւատքին մէջ բան եւելցնել է. և խօսքը փոխերլին՝ աւէպարանի համայն խօսքը փոխել է. հիմա ասոնց դաւա- նութիւնը նիկիական հանգանակին հետ բաղդատելով տեսնենք թէ՝ պակսեցու- ցածնին ինչ է։

Նիկիական հանգանակը կ'ասէ. « Հաւատամք՝ ի մի տէր Յիսուս Քրիս- » տոս ՅԱրդին աստուծոյ, ծնեալ » յաստուծոյ Հօրէ միածին այսինքն յէ- » ութենէ Հօր. Աստուած յԱստու- » ծոյ. Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմա- » րիտ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և » ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութիւ- » նէ Հօր, որով ամենայն ինչ եղև յեր- » կինս և ի վերայ երկրի երեւելիք և » անտեսանելիք. որ յաղագս մեր մարդ- » կան և վասն մերոյ փրկութեան իջ- » եալ յերկնից մարմնացաւ, մարդա-

„ցաւ, ծնաւ կատարեալապէս ՝ի Սարի-
„ամոյ սրբոյ կուսէն Հոգւոյն սրբով։
„Արար էաւ մարմին, հոգի, և միտ,
„և զամենայն որ ինչ է ՝ի մարդ ճըշ-
„մարտապէս և ոչ կարծեօք։ Զարչա-
„բեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ-
„աւուր յարուցեալ, երեալ յերկինս
„նոմին մարմնով նոյնաւ ընդ աջմէ Հօր։
„Դարձեալ է նոմին մարմնովն և փառաւք
„Հօր ՝ի դատել զկենդանիս և զմեռեալս,
„զոր թագաւորութեան ոչ գոյ
„վախճան։ Այսպէս երկար դաւա-
նութեան տեղը, որ ամէն մէկ բա-
ռը մէկ մէկ մոլորութեան դէմ խօս-
ված է, ամենեւին պարապ տեղը բաւ-
մըն ալ դրված չկայ մէջը, նորագանդ-
ներըն ասանկ կը դնեն. „Կը հաւատամք
„մեր տէր Յիսուս Քրիստոսին՝ որ է
„կատարեալ Աստուած և կատարեալ
„մարդ. ու կը դաւանիմք զանիկայ մի
„միայն փրկիչ աշխարհի և ճշմարիտ
„քահանայապետ և միջնորդ ու բա-
„րեխօս հաւատացելոց. և գլուխ իւր
„եկեղեցիին. որ և ինքը պիտի գայ
„դատել կենդանիներըն և մեռեալ-
„ներըն, և արդարութեամբ հատու-
„ցանելու արդարոց կեանք յաւիտե-

„նական, և մեզաւորաց տանջանք յա-
„ւիտենական „ :

Այս հանգամանութեան կամ շի-
տակը ըստ լոյսի կրճատութեան վրայն-
բարձանելուն կը հարցնեմք. որ
մեաց այն խօսքերնին, որ առաքելոյն ը-
սածը ամեն տեղ կը կրկնեն, „Ոչ ե-
„թէ ի մոխ եղի գիտել ինչ ի ձեզ.
„բայց եթէ զՅիսուս Քրիստոս, և
„զնոյն ի խաչ ելեալ „. Քրիստոսի խաչ
ելած ըլլալը որ պէտք էր աւելի քա-
րոզել. չէ՞ մի որ իրենց դաւանութիւնը
մէջ : Սակեց զատ բան մոքերնին դը-
րած չըլլալը Պօղոս առաքելոյն խօսքը-
ը մեզի հաստատել կ'ուզեն : Արդ-
կօրէն սկսարութեամբ մոռցած ալ ը-
լալին նէ, Նիկիական Հանգանակը մրա-
քերնին ձգելու էր, որուն սկիզբը ա-
ռեր են, հաւատամք մեր տէր Յիսուս
Քրիստոսին ըստ լոյս, վերջն ալ առեր
են գատելու պիտի գայ ըստ լոյս, մէջը
պարպեր, և իրենց խօսքերը լեցու-
ցեր են : Նոր ալ ինչ կ'ըսես, որ „ին-
„քը պիտի գայ դատելու կենդանիներ-
„ը և մեռելները „ խօսքը՝ Նիկիա-
կան Հանգանակի խօսքին մարդմանու-
թիւնն է, „Պատոց է . . . ի դատել

„զկենդանիս և զմեռեալս“. երբեք կէտ-
մին տեղը՝ որ Հանգանակին մէջ լեցուած է “Նովին Հարցեալ և Խառնեաց” բառերով, սոնց զուսանութեանը մէջ բաց է. թէ որ մոռցու

սուրբքը. «Այլ ուրեմն Աստուած
» մեր մեր, թէ բնակեցայց ի նոսա, և
» գնացից ի նոսա, և եղէց նոցա Ած
» և նոքա եղիցին իմ ժողովուրդ. և
» ապր մեր Յիսուս Քրիստոս՝ ահա ես
» եկիցս, և թէ որ բացցէ ինձ՝ մուցուք
» ես և Հայր իմ, և օրհնեսցես զնոսա
» արարողքդ. անուանիմք և տաճար
» Աստուծոյ. քանզի մեք ասէ տաճար
» Աստուծոյ կենդանւոյ եմք. և դարձ
» ձեալ՝ ոչ գիտէք եթէ մարմինք ձեր
» տաճար են Հոգւոյն սրբոյ որ ի ձեզ,
» զոր ունիմք յԱստուծոյ։ Արդ՝ եթէ
» այսպէս ասեն, և զնա դոյ՝ զԱմենա-
» նուէր, որպէս զմի որ ի մէնջ՝ բնա-
» կեալ ունելով զԱստուած յինքեանս,
» յայտնապէս խոստովանեսցին, զի յոր-
» ժամ զնա երկրպագեալ սուրբեցին
» ասա ի մէնջ և ի հրեշտակաց և յեր-
» կինս և յերկիր, յամօթ լցին որպէս
» օտարախոհք, և զարբազանից զգրոց
» զխոսեցեն ոչ գիտողք »։ (Պարապմանց,
գլ. ժբ։ Ի Ղուկասեանս. 51)։

Եւ Եփեսոսի ժողովքը՝ Նեստորի
դէմ ըրած նզովքներուն ալ՝ Նեստորի
վարդապետութեան մէջ ըլլալը կ'իմա-
ցընէ. «Եթէ որ զմի Քրիստոս բաժա-

„նեացէ յերկուս երեսս յեւ միանա-
„լոյն, եւ միայն մերձաւորութիւն եւ
„պատիւ եւ ձոխութիւն տացէ նոցա,
„եւ ոչ միութիւն բնութեամբ, նգա-
„մեալ եղիցի „ : (Ագէ. գ. պրդ. Ի ընդ-
հանար. 480) :

„Զմէջ որ ոչ խոստովանեացի զբան
„որ յԱստուծոյ՝ շարչարեալ մարմնով
„եւ խաչեալ մարմնով եւ զնահ ձաշա-
„կեալ մարմնով որ եղեւ անդրանիկ
„մեռելոց, որ կենդանին է եւ կենդա-
„նարար, նգամեալ եղիցի „ : (Ագէ.
ժբ : անդ. Ի ընդ : 489) :

Սուրբ Կիւրեղն ալ Աստուածածին
չէին ըսեր նեստորականները. եւ այս
ալ առաջին նգովքին մէջ կը յիշէ սուրբ
Ժողովքը այս խօսքով. „Զմէջ որ ոչ
„խոստովանեացի եթէ Աստուած է
„ըստ ճշմարտութեան Իմմանուէլ. եւ
„վասն այսորիկ աստուածածին զսուրբ
„Կոյսն ծնեալ ըստ մարմնոյ զմարմնա-
„ցեալ Բանն աստուած, նգամեալ է-
„զիցի. (անդ. Ի ընդ. 477) :

Զ՝ այս նգովքս սուրբն Կիւրեղ
բացատրելով՝ նիկիական հանգանակին
այն խօսքերը դէմ կը բերէ, որ այս
նորազանդները իրենց դաւանութիւն

հանեալ են. և կ'ասէ. «Զրանելի հաբ-
«քին մեր՝ որք 'ի ժամանակս իւրեանց
«ժողովեցան 'ի քաղաքն Նիկիացւոց,
«և զուղիղ և զանվրէպ հաւատոցն ե-
«գին զատհման. և ասացին հաւա-
«տաք. . . 'ի մի ոմն մեր Յն Քրիս-
«տոս Որդի աստուծոյ, և 'ի նոր Հո-
«գին։ Այս ասէին, որ Ի Աստուծոյ
«երեւեցաւ Բանն՝ որով ամենայն, ըզ-
«լոյսն 'ի լաւոյ, զԱստուած ճշմարիտ
«Ի Աստուծոյ ճշմարտէ, մարմնանալ
«մարդանալ մեռանիլ և յառնել. զի
«Աստուած է բնութեամբ միածին
«Բանն հօր. 'ի զաւակէն Աբրահամու
«ընդունի մարմին» (անդ)։

Հիմա գանք նորադանդեներուն գա-
ւանութիւնը։ Այսու և յառաջ գաւա-
նութիւններուն մէջ մի բառը չի կայ.
«Հաստատեմ 'ի Դ Սէր Յիսուս Քրիստոս»
ասելը, որ Նիկիական հանգանակին
խօսքն է, առնք աս խօսքովս բացատ-
րեր են. «Զի հաւատամք մեր ոմն Յի-
«սուս Քրիստոսին»։ Նեստորաց Քրիս-
տոսի միութիւնը չէր ճանչնար. մերու-
յիշեալ երրորդ նզովքին յայտնի է։
Զրկրորդ՝ Ինչ ծնանիլը չարչարիլը և
խաչիլը, իրենց գաւանութիւնը մէջն

վերցուցեր են։ Նեստոր ալ՝ Սանն ամ մարմնով շարշարեցաւ չէր բաներ. վերոյիշեալ ժբ նշովքէն յայտնի է։

Եւ այս խօսքս՝ ինչպէս որ Նեստորի դաւանութեանը հակառակ էր, ասոնց ալ հակառակ երեւցած պիտի ըլլայ, որ իրենց դաւանութեան կարգէն հաներ են. սակայն որ՝ Բրիտոսի մարմնոյն յիշատակը ամենեւին չի կայ այս յօդուածոյս մէջ. մինչեւ Նիկիոսի հանդանակէն «Պարոյ է Նոմին» մարմնով և փառաւք Հօր գաստել զկենդանիս և զմեռեալս» խօսքը իրենց դաւանութեանը մէջը առնելով, Նովին հարցնող Գաւոյ Հօր բառերը վերցուցեր են։

Նորոգ՝ որ Պարիսի կուսին Աստուածածին ըսել չեն ընդունիր. Նեստոր ալ անանկ էր. ինչպէս որ վերոյգրեալ ա նշովքէն յայտնի է։

Բրիտոսի կատարեալ Աստուած և կատարեալ մարդ ըսելնին բուսական չէ զանոնք այս կոգմէն ուղղափառ ցուցնելու. քանզի Նեստոր ալ կ'ըսէր ասիկայ. և սուրբն Կիւրեղ կը վկայէ ասոր. «Ասելով երանելւոյն Պօղոսի թէ՝ «Ի նմա բնակեցաւ ամենայն լրումն.

„ասիցեն թերևս ոմանք, ահա այլ Քն
„գիտէ առանձնապէս զոր ի կնոջէ
„մարդն, յորում բնակեցաւ որպէս այլ
„ոք քան զնա Քրիստոս. և առանձնա-
„պէս Յանն, այսինքն ամենայն լրումն
„աստուածութեանն մարմնապէս „ :
(Պորպ. գլ. լ : Ղբ. 144 :) Ընդեն
Ռեբեքա ասելը անանկ մի հասկընար,
որպէս թէ բուն իրենց խօսքը չէ. և
սուրբն Կիւրեղ անանց վրայ կը ձգէ իր
կարծեօքը : Բանդի նախ կը հարցընեմ,
թէ այն վկայութեան պատասխան ա-
նանկ չըսէին նէ, ինչ պիտի ըսէին :
Ընդ երկրորդ՝ ամբողջ երեսներորդ գլու-
խը կարդալով՝ կը տեսնենք որ նոր հայ-
բապետը հակաճառութիւն չընէր, վար-
դապետութիւն կ'ընէ. ուստի հակա-
ռակորդին բան խօսքը՝ գուցէ ասեն
ասելով իրեն դէմ կ'առարկէ, և սուրբ
Այրարատեանն սովորական ընթացքը այս
է. սանակ կ'ասեն ասելով ուղղակի իր
հակառակորդին դէմ մաքառելը. ինչ
կը տեսնենք : Ահա նորադարձները նի-
կիական հանգանակին մէջէն մարդե-
զութեան խորհրդոյն գաւանութիւնը
պակսեցընելնուն վրայ այս կասկածները
կուտան մեզի. և երբ որ կը տեսնենք,

որ Աստուածածին բառը չընդունելու վրայ կը յամառին, այս կասկածս գրելիս աստուգութեան կը փոխվի։

Նիկիական Հանգանակը կ'ըսէ. «Հաւատամք ի Հոգին Սուրբ յանէն և կատարեալն, որ խօսեցաւ յօրէնսն ի մարգարէս և յաւետարանն, որ էջն ի յորդանան, քարոզեաց զառաքեալն բնակեցաւ ի սուրբսն»։ Արարանդները իրենց դաւանութեանը մէջ կ'ասեն. «Եւ Հաւատամք Հոգւոյն սրբոյ որ է անեղ և կատարեալ Աստուած և աղբիւր ճշմարտութեան, որ խօսեցաւ օրէնքներով և մարգարէներով և աւետարանով. որ և ինքն է առաջնորդ և մխիթարիչ քրիստոնէից»։ Այս տեղս ալ Բրիստոսի տեսութիւնական գործոց վերաբերեալ խօսքերը չկայ. Հոգւոյն սրբոյ Յորդանան իջնալը. մարդկան փրկութեան համար խաչուած և մարդ եղած Որդին աստուծոյ առաքեալներուն բերանովը քարոզելը, և սրբոյ մէջ բնակիլը. որ Սուրբ առաքեալը կ'ըսէ «Հոգի աստուծոյ բնակեալ է ի ձեզ. և մարմինք ձեր տաճար են Աստուծոյ»։ Այսինքն թէ որ Նիկիական Հանգանակը աւելցրանի համա-

յայն հաւատալիք գիտեն նէ, ինչպէս իւրեանց դաւանութեան մէջ գրած չեն. թէ որ չէ նէ, ինչպէս Նիկիական հանդանակը աւետարանին համաձայնագոյր են։ Ուրեմն ի՞նչ կ'ասէ մի որ, թէպէտ աւէտարանի համայն և աւետարանական վարդապետութիւն է, բայց ասոնք չի հաւատամք ալ նէ կ'ըլլայ։

Նիկիական հանդանակը եկեղեցւոյ հաւատքը դաւանելով կ'ասէ. «Հաւատամք 'ի մի միայն սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի 'ի մի մկրտութիւն»։ Ասոնք առաջին հատուածը բոլորովին վերցուցեր են. որովհետև աշխարհքիս վրայ ոչ ոք ոչ մի եկեղեցի կենալը չեն ընդունիր. անոնց ներսի եկեղեցի մը կայ, անոր կը հաւատամք կ'ասեն. բայց իրենց ալ խելքը կըտրած է, որ եկեղեցի ասելը մի և նոյն հաւատքը դաւանող քրիստոնէից միութիւնն է. և դաւանութիւնը գաղտուկ չըլլար, ուստի այն դաւանութիւնը ընող մարդոց միութիւնը կամ ժողովուրդը անտեսանելի չըլլար. և անտեսանելի եկեղեցի կայ ասելը՝ բնաւ եկեղեցի չկայ ասել է. ուստի հաւատամքէն այս կտորը վերցուցեր են իրենց

հաւատոյն չի համաձայնելուն համար։ Ընդ որ տեղը՝ մկրտութիւն բառին վրայ քիչ մը բացատրութիւն ընելով կ՚ըսեն. «Ինքը կը դաւանիմք թէ ինքը „զինքնուս համար, և թէ բոլոր ճըշ„մարիտ քրիստոնեայներուն համար, որ „պարտաւորեմք մկրտուիլ յանուն ա„մենասուրբ Երրորդութեան „։ Այ՝ էկ բան մը բացատրելը՝ միտքը դիւրաւ հասկրցընելու համար պիտի ըլլայ. ասոնց այս բացատրութիւնը աւելի մը թուութեան մը պատճառ եղեր է։ Ի՞նչ ըսել կը հասկընան արդեօք ըսելով, թէ «Ինքը կը դաւանիմք, ինչ ինքզինքնուս „համար և ինչ բոլոր ճշմարիտ քրիստոնեայներուն „համար, որ պարտաւորեմք մկրտուիլ „»։ Դաւանելնին է մի իրենց և բոլոր քրիստոնէից համար, կամ թէ մկրտուելնին է մի։ Զեն որոշեր որ՝ իրենց համար անձամբ՝ և ուրիշ քրիստոնէից համար փոխանորդապէս կը դաւանին, կամ թէ կը մկրտուին, այնպէս պարտաւորութիւն սեպելով։ Թէ որ քրիստոնէից փոխանորդ կ՚ըլլան կոր մկրտութեան պարտաւորութիւնները դաւանելու նէ, մէկալ հաւատալիքները դաւանելու համար ինչու փոխանորդ չե

զան։ Այլ թէ որ իրենց և բոլոր քրիս-
տոնէից համար մկրտուելու պարտականու-
կը ճանաչեան զիրենք նէ, ըսել է որ՝ մէկ
մարդ մը ուրիշ մարդու մը համար կրնայ
մկրտուիլ. անանկ որ մէկը մկրտըվի, և մէկ ուրիշը մկրտուած սեպվի։
Այն ատենը կը մնայ հասկընալ թէ՝ մէկը իրեն համար մկրտուած ըլլալէն
ետքը մի ուրիշին համար պիտի մկրտըվի. կամ թէ իրեն առաջի անդամի մկրտութիւնը իրեն համար ալ ուրիշին համար ալ կօգտէ՞ մի. և մէկ անհաւատ մը ինքը իր անձին համար մկրտուելու կամք չունենալով, ուրիշի մը համար կրնայ՞ մի մկրտուիլ. և թէ որ ուրիշի համար մկրտուիլ կայ նէ, խօսիլ չի դիտցող և խելքը չի հասնող և միայն քանի մը օրհնածնաց երեխայն մկրտելու տեղը՝ ինչո՞ւ համար անոր կնքահայրը մկրտելու սովորութիւն չկայ։ Իրենց դաւանութեան շփոթ խօսքն է, որ այս խնդիրներս կը հանէ։ Թէ որ կ'ուզեին նէ, անանկ շփոթ խօսքերուն տեղը՝ կրնային պարզ խօսքով մկրտուելու օգուտը բացատրել, սուրբ աւետարանին և եկեղեցւոյ հաւատքին համեմատ։

Անիկիտոսն հանդանակը կ'ասէ. „Հաւատամք . . . յապաշխարութիւն „ի քաւութիւն եւ ի թողութիւն մե„զաց, ի յարութիւն մեռելոց, ի „դատաստանն յաւիտենից հոգւոց եւ „մարմնոց, յարքայութիւն երկնից, եւ „ի կեանսն յաւիտենական„ : Այս խօսքերս ալ նորադարձներուն դաւանութեանը մէջ չկայ. պատճառն ալ իրենց հաւատքին չի համաձայնիլն է. միայն հաւատքը մարդոյս փրկութեան բաւական է ըսողը՝ ապաշխարութիւն չի ճանչնար : Ինչ մեղքը Բրիտանսինը կը սեպին, և Բրիտանսի արդարութիւնը մեզի կը սեպին ըսողը՝ (ինչպէս որ տպած ալ են Աստուածաբանին մէջ) քաւութեան եւ թողութեան մեզաց կարօտ չի սեպեր զինքը : Հարցուցեր խորհուրդը Բրիտանսի մարմին եւ արիւն չի ճանչցողը՝ մարդոյս մարմնոյն յարութիւն առնելուն իրաւունք չի կրնար դնել. որովհետեւ Բրիտանս ըսաւ. „Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, „ունի զկեանս յաւիտենս, և ես յարու„ցից զնա յաւուրն յետնում„ : Նոր յարութիւն չըլլայ նէ, դատաստան ալ չըլլար. առանց դատաստանի ալ հա-

տուցում՝ չըլլար։ Ահա նիկիական հան-
գանակին մէջէն խօսք պակսեցուներ-
նին՝ անոնց վրայ առանձկ կասկածներ ը-
նելու տեղի կուտայ։

2. Ադրիանդներուն դատանոթիանը մէջ մը-
ըրական յաւելուածներ։

Դամբ հիմա տեսնելու թէ ինչ յա-
ւելուած են ըրեր իրենց դատանոթը
մէջ. որ նիկիական հանգանակին մէջ
չկայ։ Նա առաջ ասիկայ գիտնալ պէտք է, որ ըստ ժամանակին
հանգանակին մէջ յաւելուած կրնայ
ըլլալ, որ յատկապէս խօսիլ ուզելով՝
յաւելուած ալ չէ, հանգանակին խօս-
քերուն մէկուն բացատրութիւնն է,
և հարկաւորապէս պիտի պարտնակվի
"Հաւատամք 'ի մի միայն սուրբ կա-
թողիկէ և առաքելական եկեղեցի"
խօսքին մէջ. այսինքն անանկ բան մը
պիտի ըլլայ, որ եկեղեցւոյ սկիզբէն
մինչեւ հիմայ միշտ և ամէն ազգ քրիս-
տոնէից մէջ ընդունելի եղած պիտի
ըլլայ, չէ նէ՝ հանգանակին յաւելուած
չի կրնար ըլլալ։ Ուստի ըրած յաւել-
ուածներդ ասանկ չեն. և յաւելուած-
նին ասոնք են։

Անկրաւթեն վերայիշեալ շփոթ խօսքը գրելէն եաքը կ՚ըսեն. « Ինչպէս
» նաև պարտաւոր եմք ասէպ հաղորդ-
» դութիւն ընել տէրաջը մահը յիշելու
» համար՝ Քան ասհմանադրութեանը
» պէս » : Հասու ածը ամբողջ յաւելու-
ած է. բայց այս ալ շփոթ խօսք մըն
է. երկու բան կար՝ որ հարկ էր այս
դաւանութեան մէջ հասկցընելու.
և չեն հասկցուցեր : Մէկ մը՝ թէ ինչ
բանի, կամ որո՞ւ հաղորդ ըլլալու է ըս-
տէպ. և երկրորդ՝ թէ ինչո՞վ հաղորդ
ըլլալու է : Բրիտանոսի եկեղեցին մէկ
խօսքով այս երկու հարցմանս պատաս-
խան կուտայ Պօղոս առաքելոյն խօսքէն
առնելով. հաղորդութիւն կենարար
մարմնոյ և արեան Տեառն կ՚ըսէ. ա-
սոնք ալ ասա՞նկ պիտի ըսեն. կամ թէ
հացերնիս մէկ տեղ ուտելով, և գի-
նիներնիս մէկ տեղ խմելով իրարու հետ
հաղորդ կ՚ըլլանք մի պիտի ըսեն : Հա-
ղորդութեան վրայօք նորագանդներուն
մոլար և անհաստատ վարդապետութի-
ւնին գիտեմք. այս տեղս բանը շփոթ
ձգելնին՝ իրենց բուն դաւանութիւը
ծածկելով պարպամիտները խաբել է :
Բայց սուրբն Կիւրեղ՝ Նիստորոսի ժա-

զամբէն առաջ Ներսես Հերետիկոսա-
պետին նամակ մը խրրկելով՝ որ մոռ-
ռութիւններեր շինակէ, գաւանութե-
ան մասին հաւատոյքներեր ընդարձակ կը
բացատրէ, և հաղորդութեան խոր-
հրդոյն համար առանկ կը խօսի։ “Խոս-
” տովանիմք զքաւարարդս օրհնութեան
” կատարել յեկեղեցիս. այսպէս մերձե-
” նամք ՚ի խորհուրդն օրհնութեան. և
” արբիմք, յորժամ կցորդիմք ՚ի մարմ-
” նոյն և արատաւորեալն արեանն փրկչին
” ամենայնի Յիսուսի։ Եւ ոչ
” եթէ իբրեւ զլոկ մասին ընդունիմք,
” քան լոցի։ Եւ ոչ իբրեւ զմարդոյ
” արբեցելոյ ՚ի բանն իբրեւ ՚ի պատիւ
” միութեան, և իբրեւ զաստուածութեան
” բնակիչ ունելով յինքեան։ Այլ իբ-
” րեւ զկենդանարար ճշմարտութիւնն և
” ՚ի բանին մարմին. զի կենդանի է բը-
” նութեամբ իբրեւ զԱստուած. և մի
” զի միացաւ ՚ի մարմին իւր. կենդա-
” նարարեցոյց զնա։ Զ՚ի թէպէտ և ա-
” սիցէ ցմեզ. եթէ արդարեւ առեմ
” ձեզ. եթէ ոչ կերիցէք զմարմին որդ-
” ւոյ մարդոյ, և ըմպիցէք զարիւն նո՚ր,
” ոչ իբրեւ զմարդոյ որ իբրեւ զմի ՚ի
” մեզ համարիցիմք։ Բանդի զմարդ էր

„հնար եթէ մարդոյ մարմին՝ որ բնու-
„թեամբ իբրև զմեզ լցէ, եթէ կարի-
„ցէ լինել կենդանարար՝ այլ ճշմարտու-
„թեամբ միացոյց իւր ի մեր մարմին. և
„եղեւ մարդ, և յորջորջեցաւ որդի
մարդոյ։„ (Պարդ. գլ. խե։ Ի՚ղ՚ 467
468։) Հաղորդութիւն խորհրդոյն՝ Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն ըլլալը՝ սուրբ Հայրապետը ապացոյց կը բերէ Քրիստոսի յերկուց բնութեց միաւորեալ միանձն ըլլալուն, որ Աստուած չէր ընդուներ. նորադաւանները՝ հաղորդութիւնը Քրիստոսի մարմին և արիւն ըլլալը չընդունելով, Աստուծի դէմ եղած փասատը կը տկարացընեն. և որպէս թէ Աստուածաբան աղանդոյն աւելի հաստատութիւն կուտան, այս սուրբ խորհրդոյս վրայ առանձին ճառ ալ կայ արտաքսած, անկէց կրնայ ամէն մարդ հասկընալ, թէ նորադաւանները ասոր վրայօք ունեցած կարծիքնին՝ ինչպէս ուղղակի դէմ է Քրիստոսի փարդապետութեան և սահմանադրութեանը, և առաքելոյն խօսքին։

Սուրբ գրոց յայտնի խօսքին այսքան հակառակ հաւատք ունենալէն ետքը՝ զարմանք է որ համարձակեր են

այս յաւելուածս ընելու իրենց դաւա-
նութեանը մէջ. «Եւ հաւատամք Աստ-
» ուծոյ սուրբ գրոց հին և նոր կտակա-
» րանաց, որ է կատարեալ կանոն եկե-
» ղեցւոյ. և անոր մէջ պարունակած բո-
» լոր վարդապետութիւնքը և կանոնե-
» ը և խորհուրդները բոլորով սրտիւ
» ի՛ընդունիմք »։ Այլ այս խօսքերնին
սուտ է. միայն պարզամիտները խաբե-
լու համար շինուած խաբէական խօսք
մըն է։ Սուրբ գրոց խօսքը՝ և իրենց
գիտցած և քարոզած հաւատքը՝ իրա-
րու հետ բաղդատելով, ըսածիս ճշմա-
րիտ ըլլալը կը հասկընաս։

Սուրբ գրոց մէջ գրած է, որ սէրն
մեր խոստացաւ՝ որ Պետրոս առաքե-
լոյն տուած դաւանութեանը վրայ շինե-
ցած Եկեղեցին դժոխքին դռներն չի
պիտի յաղթեն։ Ասոնք կ՚ըսեն
թէ՝ մարդոց բնութենէն յաղթելով՝
սոխակեցաւ ծածուկ մնալու, ա-
նոնք որ ճշմարիտ հաւատացեալներն
որոնց Պրիսկոս պատուէր տուած էր
որ թաքաւորներու և դատաւորնե-
րու առաջն անգամ երթան նէ, իրենց
մարմնաւոր մահէն չի վախնան. և հա-
ւատքնին յայտնի խոստովանին. անոնք

հաւատքնին ծածկելով անցայտ մնացին։
Գրիգոր կ'ասէ որ՝ չի միտքերնիդը
Աստուածութիւն չի պիտի կրնան մտնել.
ասոնք կ'ասեն թէ, այո պիտի մտնեն։

Աստուածութեան խորհրդոյն հա-
մար Գրիգոր կ'ասէ. մարմին իմ ճըշ-
մարիտ կերակուր է, և արիւն իմ ճըշ-
մարիտ ըմպելի է. ասոնք կ'ասեն թէ՝
ոչ, այլաբանական կերակուր և այլա-
բանական ըմպելի է։

Գրիգոր հացը ձեռքը առնելով
կըսէ՝ այս է մարմին իմ. ասոնք կ'ասեն.
ասիկա չէ՛ քու մարմինդ, այլ քու մար-
մինդդ օրինակն է։

Սուրբ գիրք կը պատմեն որ Գրիգ-
որ լաւ առաքեալներուն, եթէ
ումեք թողուցուք զմեղս, թողեալ
լիցի նոցա. և եթէ զուրուք ունի-
ցիք, կալեալ լիցի. ասոնք կ'ասեն.
մարդս բնաւ մարդու մեղքի թողու-
թիւն չի կրնար տալ։

Գրիգոր կ'ասէ թէ՝ շատ մարդիկ
լինէին պիտի կանչեն այն օրը, ու ասեն.
չէ՛ մի որ՝ մենք քու անուանդ մարգա-
րէացանք, քու անուանդով դեւեր հա-
լածեցինք, քու անուանդով շատ հրաշք-
ներ ըրինք. այն ալ անոնց պիտի ըսէ.

ձեզ չեմ ճանչնար, թնձմէ հեռու կեցեք ով անիրաւութեան մշակներ. ասոնք կ'ըսեն թէ, միայն հաւատքն է որ քրիստոնեայն արքայութիւն կը տանի. բարի գործքը մարդուն օգուտ մը չունի։

Պօղոս Առաքեալը կ'ըսէ, թնձ քաւեցի պարծիլ՝ բայց միայն 'ի խաչ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ասոնք կ'ըսեն թէ, մէկ մարդու մը հայրը չուանով կախեն նէ, անոր որդան այն չուանին պարծելու է մի։

Սուրբ գիրքը կը պատմէ թէ՝ Զիսէ մարգարէին ոսկրներուն դպչելով, մեռելը կենդանացաւ. ասոնք կ'ըսեն թէ՝ Աստուած սուրբերուն մասունքովը հրաշք չընէր։

Դաւիթ մարգարէն կ'ըսէ որ՝ քաղցրամ նեղութիւնք են արդարոց, յամենայնի փրկէ զնոսա տէր. և պահէ զամենայն ոսկերս նոցա. ասոնք կ'ըսեն թէ՝ Աստուծոյ համար նեղութիւն քաշողներուն ոսկրները՝ որոնք Անձ ալ պահելով յարդութեան արժանի ըլլալնին կը ցցցունէ, յարգելի պէտքը չէ։

Սուրբ գիրք կը պատմեն որ՝ Մովսէս Աստուծոյ հրամանաւ տապանակ

ուխտին վրայ պատկեր և արձան չունեց, որ հրեայներդ անոր առջևը Աստուծոյ երկրպագութիւն կ'ընէին. ասոնք կ'ըսեն թէ՝ եկեղեցիին մէջ պատկեր և արձան դնելը կռապաշտութիւն է. ուրով Թէոդոս աշխարհ գալէն առաջ աշխարհքի վրայ գտնուած մէկ հատիկ հաւատացեալ ազգը կռապաշտից կարգը դրած կ'ըլլան։

Պօղոս առաքեալը՝ իրեն գրածէն աւելի բան քարոզելը կը նզովէ. ասոնք այն սուրբ առաքելոյն նզովքն ալ կը արբապրեն, և կ'ըսեն. Պօղոս առաքեալ իրեն գրածէն աւելի բան քարոզողը կը նզովէ. որով Յովհաննէս աւետարանիչն ալ նզովքի տակ ինկած կ'ըլլայ. որ Պօղոս առաքեալէն եռքը գրելով, իր աւետարանին մէջ անանկ բաներ գրեց, որ ոչ Պօղոս առաքեալ, և ոչ ուրիշ առաքեալներդ և աւետարանիչներդ գրած են։

Այս ասոնցմէ զատ՝ համարձակած են սուրբ գիրքը աշխարհաբառ և տաճկերէն թարգմանելու պատճառանօք, աստուածային խօսքին միտքն ալ աւրել, և իրենց մոլորութեանը յարմարցնել. ինչպէս որ թարգմանութիւնին

բնագրին հետ համեմատելով առա-
գած եմք։ Եւ թէ որ սուրբ գիրքին
սաստիկ կ'ընեն, որ կատարեալ կանոն
հաւատոց բռնած են, ուրիշ գիրքե-
րու մէջ ի՞նչ չեն ըներ. և թէ որ մե-
լորութիւններին գրով սերմանելը չեն
խնայեր նէ, խօսքով որչափ ևս առա-
ւել կը սերմանեն։

Եւ վերջապէս այն եկեղեցիին՝ ո-
րուն համար Պօղոս առաքեալը սիրն և
հաստատութիւն ճշմարտութեան կ'ը-
սէ, չի ճանչնալով և ուրիշներուն չի
կրնալով ցուցնել՝ իրենց հաւատքն ալ
հաստատութիւն չունի. և Պօղոս ա-
ռաքելոյն «Որ երկիւղն է, չէ՞ի հա-
»ւատոց» ըսելուն դէմ, սատնք իրենց
հաւատքը հաւատալի բաներուն վրայօք
երկմտելու և ճշմարտութիւն բռնտա-
ռելու հիմնած են. և տակաւին ճըշ-
մարտութիւնը գտանք ըսելու չի հա-
մարձակած, ուրիշներուն ճշմարտութի-
քարոզելու կը համարձակին. որով գա-
ւանութիւններին սուրբ գիրքի դէմ, և
գործքերնին խելքի դէմ ելլալը յայտնի
կ'ելլայ։

Օ՛տրմանքն այս է՝ որ իրենց այս վե-
րոյգրեալ վարդապետութիւնները, որ

ասցած մարդերունն բերանով կը խոսին, տակաւին իրենց գրած գրքերուն մէջ յայտնի գրուած չեն. և գրքերնին ալ խարդախ ձամբով ծուռ մեկնութիւններ տալով. մինչև որ ոչ մասունքը և պատկերներուն բրած յարգութիւնին պաշտել կ'ըսեն. և գրքերնուն մէջը կը խօսին որ՝ այսպիսի բաներ պաշտելը տատնաբանեաց պատուիրանքին առաջին և երկրորդ հրամանին դէմ է։ Մենք ալ անանկ կ'ըսենք. ասնոր համար ասոնք ալ չենք պաշտեր, միայն կը յարգենք։ Ուուն մրցքերնին՝ խօսքերնին ծածկելով ուղղափառ քրիստոնեայները կը ապաշտ ցրցնել է։ Չէ բուն իրենց գաւանութիւնը կատարեալ և յայտնի գրելով չի հրատարակեցնին, խարդախութեան ձամբայ մըն է, որ մոլորութիւնին յայտնի իմանալով՝ հատարակութիւնը իրենցմէ չի փախչի. և իրենք կամաց կամաց իրենց մոլորութիւնը քարոզելով, անոնց միտքը աբեն։

Ասածներուս կատարեալ ապահովութեանը համար, և որպէս զի մարդ չըսէ թէ՝ յիշեալ մոլորութիւնները անոնց չեն, կարծեօք գրուածները զբ-

պարտութիւն է, կ՚ըսեմք որ նորազանդ-
ներուն բաւական է ուղղափառ սեպ-
վելու և եկեղեցւոյ անդամ ըլլալու հա-
մար՝ գրով և ստորագրութեամբ վե-
րոյիշեալ մոլորութիւնները ուրանալ.
և անանկ բաներնը նզովել. և հայաս-
տանեայց սուրբ եկեղեցւոյ ընդունած-
ները ամբողջապէս ընդունիլ. ասանկ
որ ընեն նէ, ուղղափառ են, չէ նէ մո-
լորեալ են։

Ի.

Նորազանդներուն գէմ սուրբ Եկեղեցւոյն
բրածը հալածում չէ։

Ինչու հիմա բանածները հաս-
կընալէն ետքը այն ալ գիրքս կ՚իմաց-
վի որ, ասոնց դաւանութիւնը քրիս-
տոնէական սուրբ Եկեղեցւոյ դաւա-
նութիւնը համեմատ չէ։ Ասոնց արբ-
բապան Պատրիարքն ալ՝ նոյն ընդհա-
նուր եկեղեցւոյն մէջ առաքելական
օրինաւոր յաջորդութեամբ նոյն ե-
կեղեցւոյ հովիւներէն է. և ինք գիրքը
եպիսկոպոսներուն պատուէր դնելով
„Ա երակացու լինել հաւատարիմ բա-
„նին վարդապետութեան, և զհակա-
„ռակորդսն կշտամբել„ (Տիտոս. ա. 9)

ան ալ զինքը պարտաւոր սեպէց ժամա-
նակ ժամանակ թէ քարոզութեան մէջ
և թէ առանձին այս մոլար նորադանդ
կրօնքին հետեւողները յորդորել. և
ողջամիտ վարդապետութիւնը անոնց
ասպիսցնել, ինչպէս որ Պօղոս ընդ հան-
րական եկեղեցին կը ասպիսցնէ. և ա-
նոնց զրելիները սեանելով՝ սուրբ առա-
քելոյն միւս պատուէրը 'ի գործ դնել
հարկ եղաւ որ կ'ըսէ. "Յառնէ հերձ-
"ուածողէ յետ միանգամ՝ և երկիցս
"խրատելոյ հրաժարեսջիր. գիտասջիր
"զի թիւրեալ է այնպիսին և մեղանչէ.
"անձամբ զանձն դատապարտեալ" (Տի-
տոս. գ. 10)։ Այս թէ "իսկ եթէ որ
"այլազգ ինչ ուսուցանիցէ, և ոչ ան-
"ացցէ ողջմտութեան բանից տեառն
"մերոյ Յիսուսի Քրիստոսի (ինչպէս
"են ասոնք. որ Քրիստոսի տեառն մե-
"րոյ ճշմարիտ խօսքը այլաբանութեամբ
"կ'ըսեն) և ոչ ըստ ուծապաշտութեան
"վարդապետութեան. այնպիսին հե-
"պարտացեալ է և ոչինչ գիտէ . . .
"բայց դու մերժեսջիր յայնպիսեացն"
(Ա. Տիմոթ. գ. 3. 4. 5)։ Այս որոմիտ
տեսակ եպիսկոպոս գտնելիքովք՝ պաշ-
տօնը միայն իւր անձին համար զգու-

շանալ չէ՞, իրեն յանձնելոյն ժողովրդին ալ հոգալու պարտականութիւն է. ուստի սուրբ եկեղեցւոյ զաւակ գանելոց ուղղափառ քրիստոնէից առ հասարակ իմացուց, որ սատանիներուն հետ տեսնելու զգուշանան, և գիրքերնին չի կարդան. որպէս զի անոնց մոլար վարդապետութիւնք չի խաբուին. անոնք իրենց տունը չընդունին, և անոնց բարեւ անգամ չի տան։ Այս ասոյ սրբոյն Յովհաննու աւետարանչին առ հասարակ հաւատացելոց տրուած խրատը՝ այն ալ իր ժողովուրդին տրուա. «Եթէ որ գայցէ առ ձեզ, և զվարդապետութիւն զայս ոչ ունիցի, մի ընդունիք զնա 'ի տուն. և մի ողջոյն տայցէք նմա. և որ տացէ նմա ողջոյն, կցորդ լիցի չարեաց գործոց նորա» (Յովհ. բ. Կաթ. ii. 10. 11)։ Այս պատուէրս՝ որ առաքելական է, հարկ է որ՝ նոյն իսկ նորազանդներն ալ պահեն, որովհետեւ սուրբ գրոց խօսքին հետեւիլ կը խոստանան. և իրենց վարդապետութիւնը ճշմարիտ կը կարծեն. ուստի անոնք երբ որ կարդալիին որ իրենց վարդապետութիւնը չընդունողներուն հետը չի տեսնուիին, միայն իրենց կրօնա-

կից և աղանդակիցներուն հետը տես-
նվին, և ասոր վրայ կը հաստատվինք կոր
ըսելով կը բողքեն՝ այս ալ նշան մըն է,
„որ սուրբ գրոց կանոնները . . . բոլորով
„արտիս կ'ընդունինք „ըսելնին սուտ է։
Նայց մեք առաքելական պատուիրանին
ճշմարտապէս ունկնդիր եմք։

Ընդ՝ այս կերպով ժողովուրդը ա-
նոնցմէ զգուշացընելովը, անոնց ինչ է
ըրեր, որ կը հաստատվինք կոր ըսելով՝ ի-
րենց անուն հաստատեալ կը դնեն։ Ի-
րենք բաւական մարդիկ են. երեսուն
և հինգ քառասուն հոգի մը կ'ելլեն.
ազատ են իրարու հետ տեսութիւն ունե-
լու, իրարու գրածը կարդալու, իրա-
րու հետ առուտուր ունենալու, խորհուրդ
դակցելու, և այլն։ Ընդիկայ հաւատա-
ցեալ և Քրիստոսի իրեն յանձնած ժո-
ղովուրդը պահպանել նէ, որ անոնց թոյ-
նէն չի թունաւորվին, անոնք հաստատել
է մի։ Ապրդը օձի քով երթալէն զգու-
շացունելը՝ օձը ապանել է մի։ Ցունը
գող մոտալիք ճամբա չի թողելու հա-
մար՝ դրռները և պատուհանները գոց
պահելը և արթուն կենալը գողը հա-
լածել է մի։ Ոչ իրաւունք կունենան մի
օձն ու գողը՝ այնպէս զգուշացող-

ներսումն համար, մեզ կ'ապանեն կամ
կը հալածեն կոր ըսելու։ Այս խորհրդա-
գածութիւնամբ մենք ալ կ'ըսենք. նոր-
ապանդներդ ամենեւին իրաւունք չու-
նին զկրօնք հալածեալ ըսելու. բայց
աստուածային բանին զօրութիւնն է՝
որ անունք կը հալածէ. այն զօրութիւնը՝
որ Քրիստոս նոր եկեղեցւոյն տրմիր է
ըսելով. "Լցէք և եկեղեցւոյն ոչ լուր-
ցէք. եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն
և զմաքսաւոր"։ Այս զօրութիւնը
սուրբ եկեղեցւոյն քով ոչ ոքի ատանք
չեն ընդունիր. բայց իրենց խիղճը ի-
րենց դէմ վիպելով, այդպէս կը հա-
լածուին կոր կ'ըսեն ու կը ապդնապին։
Ասանց համար է Պօղոս առաքելոյն ը-
սածը "Հարեալք իւրեանց խղճիւ մի-
ոսաց". ուստի երբոր ուրիշներդ մոլո-
րեցընելու դիւրութիւնը անոնցմէ ալ
վերնայ նէ, զկրօնք հալածեալ կը սե-
պեն։ Իրենց լեզուն բրուռնոյ չի կայ.
որքան Պատրիարքը՝ միայն աստուա-
ծապաշտ և հաւատացեալ ժողովրդոց
կ'ապրատրիկ, որ անանկներուն խօսքին
դէմ ակամէնին գոցեն. և անոնց գրբ-
քերը չկարդան, չըլլայ որ ինչպէս օձը
Լուսն խաբեց, անոնց միտքն ալ Յան

Բրիտանայի միամտութենէն աւրուին. ինչպէս որ Պօղոս առաքեալը կ՚ըսէ (Բ. Կորնթ. ժա. 9)։ Արքայն Պարսից քին ամէն առեն հոգը և պատուէրը այս է. մանաւանդ թէ՝ աւրը գրոց պատուէրն է ասիկայ. և ամէն քրիստոնեայ՝ թէ որ իր հոգւոյն փրկութիւնը վտանգի մէջ ձգել չուզէր նէ, պէտք է առանց մոլորեալ և մոլորեցուցիչ խաբեբայներէն հրաժարիլ և չխաբուիլ անոնց մեր ազգասէր եմք ըսելուն. ուրիշներուն ազգասիրութիւնեն՝ ազգին հաւատոց մաքրութիւնը աւելով կը ցրցրնէն կոր որ այսպէս ազգասիրութիւն չըլլար, ազգատեցութիւն ալ պիտի գէշն է։

Այլ առանց մեր ազգը կը սիրեմք ըսելն ալ իրենց չարամտութեանը մէկ մասն է. և արքայն առաքեալն ալ՝ մէկ մը այս նշանս, և մէկ մ՚ալ պահքը պարապ բան է ըսելով իրենց որոմայնին ապատ համարձակ ծառայութիւն ընելենին նշան տալով՝ նոյն բանը կը պատուիրէ. ինչ որ արքայն Պարսիցքը գործով կատարեց. «Զաչեմ զձեզ եղբ՞ բարք, գիտել զայնպիսիսն որ հերձ՞ ուածս և գայթագղութիւնս առնեն

„ցեն արտաքոյ վարդապետութեան զոր
„զուքն ուսայք, և խորհեցարուք ի նո-
„ցանէ։ Զի այնպիսիքն տեսանն մե-
„բուժ Քրիստոսի ոչ ծառայեն, այլ
„իւրեանց որովայնի. և քաղցրաբա-
„նութիւն և օրհնութիւն պատրեն զսիրտս
„անմեղաց։„ (Հռովմ. ժզ. 17. 18։)
Քրիստոսի չի ծառայելնին և իրենց ո-
րովայնին ծառայելնին խօսքով չէ ալ
նէ, գործքովնին յայտնի կ'ընեն. քանզի
փրնարութենին Քրիստոսական ճըշ-
մարտութիւնը չէ, այլ իրենց փորը կըշ-
տանալ և ապրուստ գտնելնին է. և ա-
սիկայ ամէն մարդ գիտէ. և իրենք ալ
չեն կրնար ուրանալ։

Եւ այն խօսքերնուն ալ հաւատալ
պէտք չէ, որ կ'ըսեն թէ „յօժարու-
„թեամբ կ'ընդունիմք, թէ որ սխալ-
„մունքնիս ցուցնել հաճիք„ քանզի
ամէն ատեն թէ գրով թէ խօսքով
սխալմունքներնին ցուցնողներ պա-
կաս եղած չեն. և այն ալ սուրբ գրոց
խօսքովը. և Քրիստոսի ընդհանրական
եկեղեցիին վկայութեամբը, ինչպէս
որ շատերուն յայտնի է։ Բայց ատոնք
սուրբ գրոց խօսքերուն ծուռ մեկնու-
թիւններ տալով՝ որ իրենց տուած մեկ

նութիւնը Բրիտանոսի օրէն մինչեւ ա-
ռանց ազանդը հնարողին օրը լսած չէ, և Բրիտանոսի ընդհանրական եկեղեցին կը սխալի ըսելով՝ իրենց մոլար կարծեացը վրայ յամառելով կը կենան. թէ և ապարատխան չի գտնան ալ նէ։ Այսու ամենայնիւ իրենց սխալմունքը ճանչնալու միջոցները պակաս չեն. և երբ որ ճանչնան, և իրենց մոլորութէն դառնան, արքազան Պատրիարքը պատրաստ է անանկները ընդունելու սուրբ եկեղեցւոյ գիրկը՝ որ ամէնուն ալ գրթած մայրն է. միայն այս պայմանաւ՝ որ իրենց սխալը ճանչնալնին գրով ըստորագրեն և անոր տան. և անիկայ անոնց զիրքը և դարձը՝ առ հասարակ հաւատացեալոց ծանուցանէ, որ առաջնոյն նման տեսութիւն և ընտանութիւն ընեն անոնց հետ։

Այս ասիկայ անոնց գիւրացնելու համար ճամբայ ցրցնելն ալ հարկ կը սեպեմք. Բրիտանական ընդհանուր եկեղեցւոյ դաւանութեանը համեմատ հաւատք ունենալու համար միայն նք գիրքը կարդալը բաւական չէ. քանզի նոյն սուրբ գրոց մէջ վկայութիւն ունիմք Պետրոս առաքելոյն խօսքը, որ

Պօղոս առաքեալն նամակներուն հա-
մար կ՚ըսէ թէ՝ «Դուանին իւրաքանչիւր դրժ-
» ուարիմացք զոր անուանեն և յոգ-
» դոցքն կամակորեն առ իւրեանց ան-
» ձանցն կորուստ» (Բ. Պետրոս. գ. 16)։

Ուստի այս կորուստէս զգուշանա-
լու համար կը յորդորեմք սուրբ գիրքը
կարդացողները, որ առանց առաջնորդ-
դի չի կարդան. և ասոր համար ալ որբ-
բաղան Պօղոս առաքեալը կը խրատէ
ըսելով՝ «Յիշեցէք զառաջնորդս ձեր
» որք խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ,
» հայեցեալք յելս գնացից նոցա նմա-
» նողք եղերուք հաւատոյն» (Եբր. ԺԳ. 7)։ Ասոնք ազգին աստուածային
բանը խօսողը՝ մեր սուրբ Աստուածաշունչ հայրն է. այն որ այնքան հրաշք-
ներով և այնքան չարչարանքներ քաշելով ազգերնիս լուսաւորեց, 'ի հարկէ
ճշմարտութիւն էր քարոզածը. որ Աստուած ալ անոր քարոզած հաւատքը
հաստատելու համար հրաշքներ բրաւ. որ իր ամենակարող զօրութիւնը միայն
յատուկ է անանկ հրաշքներ ընելը։ Հայաստանեայց եկեղեցին անոր քա-
րոզած հաւատոցը հաւատարիմ աւանդապահն է. անոր վարդապետութիւնը

իր գիրքերին սրմիցէք. և Աստուծոյ
աղօթք լրէք որ սուրբ Լուսաւորչին
միտքը լուսաւորող, և անոր միջնորդ-
դութեամբը մեր ազգին վրայ հաւա-
տոց լոյսը ծագող սուրբ Հոգին ձեր
միտքն ալ լուսաւորէ. զրլայ որ ուրիշ
հոգի խնդրէք. քանզի այն առնելը մե-
լորութիւն հոգին կը տիրէ ձեզի. յորմէ
Ընարհք տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի և Ճշմարտութեան Հոգին ա-
զատեսցէ զձեզ. ամէն։

Ի՛երուսաղեմէրուն Բ. գրոյն եւմ
Բ. պէպրակ մըն ալ կայ պակեալ, ան ալ
անմիջապէս կ'ելլէ, և անոր ալ գիրը
40 փարայ է։